

Մեծաւասան կուսակցութիւնը ընդունաւ ուսանողներէ համար: Ս. Պետերբուրգի հոգեւոր ձեռնարանի վերատեսուչ Անաստասիյ եպիսկոպոսն Ս. Սինօդին միջնորդել է թոյլ տալ ձեռնարանին կից կառուցանել առանձին մենաստան այն ուսանողների համար, որոնք ընդունում են կուսակրօնութիւն: Այդ մենաստանի կառուցման համար վերատեսուչը խնդրում է վարկ բաց անել մինչև 100 հազար ռուբլի, հաշուի առնելով յատկացնել ամբողջ շինութիւնը 20 հոգու համար: Ս. Սինօդը բացասում է այդ միջնորդութիւնը՝ պարզելով իւր հայեացքը, որ չպէտք է կուսակրօն ուսանողների համար բարձր աստղածափանակաւ դըպրոցին կից ստեղծել այդ տեսակ բացառիկ արօնօնութիւններ, որոնցից զրկուած են միւս սովորական ուսանողները: Սրբազան հայրերի կարծիքով կուսակրօն ուսանողը ձեռնարանում պէտք է նոյն կեանքը վարի, ինչպէս մնացած բոլոր ուսանողները և չպէտք է զպրօցական նստարանից նրանց ընտելացնել փաթթամութեան և կեանքի այլ և այլ յարմարութիւններին:

Եկեղեցական խմբական երգեցողութիւնը. Վերջին ժամանակներս Ռուսաստանում եկեղեցական երգեցողութիւնը լաւ հիմունքների վրայ դնելու մասին լուրջ կերպով խօսուած է: Անթիւ խմբապետներ զանազան կտորներ եկեղեցական երգերից՝ վեր են ուծում ընդհանուր խմբականի կաթոլիկ եկեղեցական մուզիկայի օրինակով: Եկեղեցական խմբապետներից շատերը ձգտում են տալ եկեղեցուն գեղարուեստական մուզիկա: Գրեհանիի կարծիքով եկեղեցին պէտք է լինի մի մեծ անցք, որի միջոցով պէտք է ներս թափանցի ժողովրդի մէջ բարձր գեղարուեստի հոսանքը: Երբ այնտեղ կրկնականօքնի իսկական գեղարուեստը, ժողովուրդի գեղարուեստական ճաշակը կը զարգանայ և նա կընտովորի սիրել ձըշմարիտ գեղարուեստական երգը, և այդ ճանապարհով կը գայ ժամանակ, գեղարուեստական մուզիկայի անհամեմատ նեղ շրջանը բաւականութիւն չի տալ նորան և նա կը զգայ պահանջ աւելի ընդլայնելու իւր մուզիկայի աշխարհայեացքը:

ԲԱՂՆՈՒԹԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Բողոքական եկեղեցու ծխի բարեօրոգոյթիւններ Ռուսաստանում, Բողոքական եկեղեցու ծխի բարենորոգութեան նախագիծը կազմուած և ներկայացուած է 1911 թ. ներքին գործոց նախարարին, որը պէտք է ներկայացնի Պետական Դումայի քննութեան: Աւետարանական-Լուտերական հոգևորականութեան ապրուստը

հոգում է ծուխը: Իրենք ծխականներն որոշ պարագ և տուրք են մատուցանում եկեղեցուն և նորա պաշտօնեաներին: Լիֆլիանդիայի և Էստլիանդիայի նահանգներում ծխականներն իրենց պարտականութիւնները կատարում են հոգևոր պաշտօնեաների և եկեղեցու շինարարական մասի վերաբերեալ: Դէպի հոգևոր պաշտօնեաներն իրենց պարտքը կատարում են հոգաբարձին տալով և անձամբ իրենց աշխատանքով նպաստելով: Մեծ մասամբ իրենց ստացած բերքերից բաժին են հանում հոգևոր պաշտօնեաներին և կամ որոշ օրեր օգնում նրանց հոգային աշխատանքներին: Հոգևոր պաշտօնեաները ծխի հոգևոր պէտքերը կատարելու համար ստանում են վճար համապատասխան ծխականի ունեցած միջոցների փոդով կամ բերքով: Միական համայնքը հոգում է եկեղեցու շինութեան կամ նորոգութեան ծախքը՝ մատակարարելով պահանջուած նիւթերը:

Ներկայումս այդ ձևը—հայթայթել եկեղեցու և նորա պաշտօնեաների պահպանութեան միջոցները բնական տուրքերով—համարւում է հնացած և շատ տեղ փոխարինուած է դրամով: Միայն մնում է անփոփոխ հոգային հարկերի նշանակումն: Հոգևոր պէտքերը կատարելու համար եկեղեցու հոգևոր պաշտօնեաները ստանում են վարձատրութիւն եկեղեցական հոգաբարձութիւնից: Եկեղեցական ծխական հաստատութիւնների կառավարութիւնը կատարւում է հետեւեալ ձևով: Եկեղեցական ծխական գործերը կառավարում են եկեղեցական խորհուրդն և եկեղեցական հոգաբարձութիւնը: Եկեղեցական խորհուրդը բաղկացած է եկեղեցական աւագներից, որոնք ընտրւում են վեց տարով առանձին ընտրողական թաղամասերից: Եկեղեցական աւագներն ընտրելու համար ծխականները բաժանւում են երեք կարգի: Առաջին և երկրորդ կարգին պատկանում են նոքա, որոնք համաձայն իրենց եկամտի և ունեցած սեպհական անշարժ կալուածքի գնահատութեան կատարում են իրենց առ եկեղեցին և նորա պաշտօնեաներն ունեցած պարտականութիւններն (տուրքի վճար): Երրորդ կարգին պատկանում են այն ծխականները, որոնք չեն կատարում իրենց հոգային տուրքի պարտականութիւնները և ապրում են ծխի սահմաններում և ընտրութիւնից առնուազն նախընթաց վերջին երկու տարուայ մէջ անընդհատ վճարել են կամաւոր տուրք տարեկան մի ոտւրլուց ոչ պակաս: Իրաւունք չունեն մասնակցել ընտրութիւններին այն անձինք, որոնք գտնւում են քննութեան և դատաստանի տակ այնպիսի յանցագործութեան պատճառով, որ կարող է նորան ենթարկել իրաւունքների զրկման կամ սահմանափակման վտանգին: Նոյնպէս և ծառայութիւնից արձակուածներին՝ գողութեան, խաբեբայութեան և իրեն հաւատացած գօյքը

խըրացնելու պատճառով, երբ նորա դատաստանով չեն արդարացած, նիւթական կարողութիւնից զրկուածները, բացառութեամբ նոցա՝ որոնք որ եւ զժրախտութեան պատճառով են զրկուած, հոգեւոր աստիճանից կամ կոչումից զրկուածները, հասարակութիւնից կամ ընկերակցութիւնից հեռացրուածները, եկեղեցական տուրքերն անկանոն վճարողները, որոնց վրայ կայ ապաւիկ ոչ պակաս տարեկան տուրքից:

Եկեղեցական խորհրդին վերաբերում են բոլոր այն գործերն ու հարցերը, որոնք վերաբերում են տեղական ծխական եկեղեցուն ու նորա հաստատութիւններին, ինչպէս օրինակ—եկեղեցու գոյքերի կառավարութիւնը, եկեղեցական հոգաբարձուի ընտրութիւնները, պատուրի ընտրութիւնները, հոգացողութիւն եկեղեցական շինութիւնների, բարեգործական հաստատութիւնների վերահսկողութիւնը և այլն: Եկեղեցական խորհրդին նախագահում է եկեղեցական հոգաբարձուն: Եկեղեցական խորհրդի վճիռները հաստատութեան չեն ենթարկուում: Եկեղեցական հոգաբարձութեան կազմի մէջ մտնում են միայն եկեղեցական հոգաբարձուն, սորա օգնականը և պատուօրը: Հոգաբարձութիւնը ներկայանում է եկեղեցական խորհրդի գործադիր մարմինը, որին և ներկայացնում է տարեկան հաշուետուութիւն իւր գործունէութեան մասին: Եկեղեցական հոգաբարձութիւնն է հրաւիրում ծառայութեան երգեսոն նուագողին և այլ եկեղեցական ծառայողներին:

Ինչպէս տեսնում ենք Լուսերական եկեղեցու կազմակերպութիւնը դրուած է ինքնակառավարութեան լայն հողի վրայ, մանաւանդ աչքի է ընկնում եկեղեցու և նորա պաշտօնեաների նիւթական կարիքներին բաւարարութիւն տալու տուրքերի բաշխման գեղեցիկ ձևը: Վերջին հանգամանքը միանգամայն գոհացուցիչ է վճռելու հոգեւորականներին ապահովեցնելու հարցը: Այդ կարգը սահմանուած է հնուց և ներկայ օրինագծով հաստատուած է եղածը: Միանգամայն արդարացի է ծխականների տուրքի վճարման կարգը ըստ կարողութեան. ըստ եկամտի համեմատական եղանակով (пропорциональность доходности): Այս ձևով երբեք զգալի չի լինիլ ծխականների տուրքի վճարումն: Հայ Բանաստեղծի ապահովութիւն հարցը՝ մանաւանդ զիւղեում, կարելի է վերցնելու կարգով լուծել: Այս մասին ասիւթ կունենանք խօսելու այլ անգամ:

Բ. Վ. Ա.